

էր, որ Փիլիպպոս կաթողիկոս զնաց Սպահան: Դարժեցի կը զրէ:

«Այս Փիլիպպոս կաթողիկոս հանապաղ ըզճատողոր եւ խանդակաթ տենչամբ փափաքէր, թէ որով արդեօք իցէ հնար զի առեալ զսուրբ Աջն բերցէ ի սուրբ էջմիածին, որոյ վասն ի բաղում խնդրանօք խօսեցաւ ընդ քահանայս եւ ընդ ժողովուրդս Զուղայեցոց, եւ մանաւանդ ընդ մեծահաւատ եւ քրիստոսաւէր իշխանին Խօջայ Սարֆրապին՝ որդւոյ Խօջայ Նազարին, որ յարդեանս ժամանակի էր աւաղ Զուղայեցոց: Խօսէր եւ աղաչէր Փիլիպպոս կաթողիկոս, զի տացեն զԼուսաւորչի Աջն ի նա, որ տարցէ ի սուրբ էջմիածինն, ի տեղ իւր»: (51)

Զուղայեցիք ինչ ինչ պատճառաբանութիւններով մերժեցին տալ Աջը: Սակայն, Փիլիպպոս կաթողիկոս եւ համակարծիք Երեւանցիք, զիմելով արքունի զանազան պաշտօնեաներու եւ նոյնիսկ Շահին, կը յաջողին առնել «զնոմոս հրամանաց թագաւորին՝ երեւ առ թոռունսն Խօջայ Սաֆարին, զի որդիքն վախճանեալք էին, եւ անունք թոռանց էր Զալալ, եւ Միքայէլ, եւ Սինան, եւ Պստիկ աղա եւ սոքա ոչ կամեցան տալ զԱջն որոց սաստեաց կաթողիկոսն բարկութեամբ մեծաւ. եւ նոքա երկուցեալք ի սրբութենէ նորա. եւ ի հայրապետական անիթիցն՝ թուլացան ի պնդութենէ: Եւ հայրապետն տէր Փիլիպպոս բաղում քահանայիք ինքնին զնաց ի տուն Խօջայ Սաֆարին, էառ անտի զաջն եւ երեւ ի Խօջենց եկեղեցին, եւ յաւուր կիրակէի, մատոյց պատարաղ եւ երաց զԱջան...» (52) եւն.:

Նոր Զուղայու վանքին թիւ 71 ձեռագիրը, թղթեայ, նօտրդիր, երկսիւն «Բանք Սողոմոնի, Թուղթք Պօղոսի» եւն. գրուած է. «Ի թուիս Հայոց հաղար Դ. (1641) զրեցաւ ա(ստուա)ծաշունչ տառս ի քաղաքն Շօշ որ է Ըսպահան ընդ հովանեաւ Սր. Յակոբայ ձեռամբ անարհեստ եւ փժոռն զրչի եւ բաղմամեղ դպրին Անտոնի ի հայրապետութեան տեառն Տէր Փիլիպպոսի. եւ ի թագաւորութեան Պարսից Շահսէֆոյն. Առաջնորդութեան զիւղա-

քաղաքին Խաչատուր վարդապետի Կեսարացո իմաստնոյ եւ հանճարեղ փիլիսոփայի Իշխանութեան Խօջայ Սարֆրասի իմաստնոյ եւ բարեպաշտի»:

East India Ընկերութեան ղեկնատան մէջ կան թուղթեր, 1640 փետրուար 19 եւ 28 թուակիր, ուր կը յիշուի Եւտրդ անուն Խօջայ Սաֆրադի (Saffraes) «Պարսկաստանի Հայոց մեծին» մէկ ծառայողը, որ Սարաղ երթալու համար կը սակարկէ:

1641-ին Խաչատուր Կեսարացի ի Նոր Զուղայ կը տպագրէ Հարանց Վարքը, որուն յիշատակարանին մէջ կը կարդանք.

«Թիւլն ՌՂ (1641) ի քաղաքն Շօշ որ է Սպահան, յանապատն Նոր Զուղայու, ի թագաւորութեանն Պարսից Շահ Ալֆույն յիշխանութեանն Գիւղաքաղաքին Զուղայու իշխանաշուք Պարոն Խօջայ Սարֆրապին իմաստնոյ եւ բարեպաշտի, ձեռամբ Խաչատուր վարդապետի Կեսարացոյ... եւն.»:

Դարձեալ այդ վանքի թանգարանը կը պահուի հրովարտակ մը, տրուած նկար թիւ 4 Հիմնէթի 1052 (մեր 1642-1643) թ.ին Շահ Ապպաս Երկրորդէ (Փոքր կոչուած), ըստ որուն կ'ըսուի, թէ քանի որ Խօջայ Սաֆրադը արքայական բարձր շնորհներու արժանացած է, իր թագադրութեան առթիւ անոր կը նուիրէ զառկապայ մը պատուոյ եւ վերարկու մը, նոյն առնէն հրամայելով, որ արքունի նուէրը տանող պաշտօնեային Խօջայ Սաֆրադ պէտք է տայ տասներկու թուման իրր աջքալուսողչէք: Աւելորդ է ըսել, որ ուզուած զուճարը խոշոր բան մըն էր այդ օրերուն համար, եւ արքունի միջոց մը երկրին մեծատուններէն զըրամ կորդելու:

1648-ին գրուած աւետարանի յիշատակարանին մէջ, որ այժմ կը գտնուի Նոր Զուղայի թանգարանին մէջ իբր թիւ 499, տեղական թղթեայ, երկսիւն, բոլորդիր, կաշեկաղմ, կը կարդանք.

«Ստեփաննոս սուտ անուն քահանայ... կատարեցի զսուրբ աւետարանս ի մեծ թվականին հայոց ՌՂէ (1648) ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եկեղեցոյս... Ի հայրապետութեան տեառն Փիլիպպոս կաթողիկոսի ամենայն

(51) Անդ՝ էջ 319:

(52) Անդ՝ էջ 320: